

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
19.05.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝					
1.1 Լրիվ անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ				
1.2 ՀՎՀՀ-ն	02709202				
1.3 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Հանրապետության 22 տար.2				
1.4 Պետական գրանցման համարը	00001.				
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2010-06-28				
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)010580032				
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.appa.am				
1.8 Էլեկտրոնային փոստը	info@paap.am				
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝					
Անունը	Ազգանունը	Պաշտոնը			
Վաղինակ	Եղիազարյան	Գործադիր տնօրեն			
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը					
ԱՊՊԱ համակարգի կարգավորում					
Սպառողների շահերի պաշտպանություն					
4 Հասարակական կազմակերպության՝					
4.1 Անդամների թիվը	7				
4.2 Կամավորների թիվը					
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	3				
6. Իրականացված ծրագրեր՝					
Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը	
1	ԱՊՊԱ համակարգի կարգավորում	ՀՀ և ԱՀ	ԱՊՊԱ ոլորտի կանոնների ընդունում և դրանց կատարման վերահսկում: Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորում:	Ընթացքի մեջ	
2	Սպառողների շահերի պաշտպանություն	ՀՀ և ԱՀ	Օրենքով նախատեսված անձանց ապահովագրական հատուցումների վճարում և հետադարձ պահանջի կիրառում: Սպառողների դիմում-բողոքների կարգավորում:	Ընթացքի մեջ	
7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝					
Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					
8. Տարեկան մուտքեր՝					
8.1 Դրամական միջոցները	4,017,357,003				
8.2 Գույքը					

Ընդամենը		0	
9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ			
Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները	
1	14,823,207	ՀՀ Պաշտպանության Նախարարություն	
Հ/Հ	9.2 Գույքը		
1			
Ընդամենը		14,823,207	
10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը`			
10.1 Դրամական միջոցները		4,007,469,451	
10.2 Գույքը			
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		4,007,469,451	
11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը`			
11.1 Դրամական միջոցները		14,823,207	
11.2 Գույքը			
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը	
1			
Ընդամենը		14,823,207	
12. Չեռնարկատիրական գործունեություն իրականացնելու`			
Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	
Նշումներ			
Օրենքով նախատեսված անձանց ապահովագրական հատուցումների վճարում և հետադարձ պահանջի կիրառում:			

Կից ներկայացվում է`

Սուղիտորի եզրակացություն` _____ 41 _____ էջից
Էջերի քանակը


Գործադիր մարմնի ղեկավար _____ ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____ ստորագրություն, անունը, ազգանուն

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
հասարակական կազմակերպություն

31 դեկտեմբերի 2022թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդի կազմը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Եկամտի և ծախսերի հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton C.JSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության (Բյուրո) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսերի մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բյուրոյի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բյուրոյից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բյուրոյի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է

Բյուրոյի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բյուրոն, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բյուրոյի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բյուրոյի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բյուրոյի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների


համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բյուրոյին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:


Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

25 ապրիլի 2023թ.



Նաիրա Ուլունց

Աուդիտի պատասխանատու



«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության Խորհրդի կազմը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ներսես Երիցյան	Խորհրդի նախագահ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Արման Զիլինգարյան	Խորհրդի անդամ, ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ, պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ
Կարեն Պետրոսյան	Խորհրդի անդամ, «Ռեզո» ԱՓԲԸ-ի գույքային տեսակներով ապահովագրական հայտերի կարգավորման վարչության ղեկավար
Վարդան Գևորգյան	Խորհրդի անդամ, «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրենի առաջին տեղակալ
Կարեն Զիլինգարյան	Խորհրդի անդամ, «Սպառողների Խորհրդատվության կենտրոն» ՀԿ նախագահ
Մանե Մարտիրոսյան	Խորհրդի անդամ, «Նաիրի Ինշուրանս» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Տիգրան Քեյան	Խորհրդի անդամ, «Վարորդի ընկեր» ԻՀԿ-ի նախագահ և համահիմնադիր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
	Ծանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4	22,983	14,499
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	5	18,661	28,840
		<u>41,644</u>	<u>43,339</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	410	296
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	392,998	447,301
Ներդրումներ բանկային ավանդներում	8	513,059	213,385
Մնացորդներ բանկերում	9	229,965	220,077
		<u>1,136,432</u>	<u>881,059</u>
Ընդամենը ակտիվներ		<u>1,178,076</u>	<u>924,398</u>
<i>Պարտավորություններ</i>			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Երաշխավորման ֆոնդ	10	306,650	-
		<u>306,650</u>	<u>-</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	107,683	191,427
Վարձակալության գծով պարտավորություն	5	19,996	29,370
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		3,711	5,931
Պահուստներ հատուցումների գծով	12	124,396	200,977
		<u>255,786</u>	<u>427,705</u>
Ընդամենը պարտավորություններ		<u>562,436</u>	<u>427,705</u>
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		615,640	496,693
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		<u>1,178,076</u>	<u>924,398</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. ապրիլի 25-ին

Վաղինակ Եղիազարյան
Գործադիր տնօրեն



Քնար Պետրոսյան
Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամտի և ծախսերի հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Եկամուտներ հիմնական գործունեությունից	13	293,403	312,832
Ծախսեր պայմանավորված հիմնական գործունեությամբ	14	(38,219)	(46,667)
Համախառն արդյունք		255,184	266,165
Եկամուտներ հիմնական միջոցների օտարումից		2,950	95
Եկամուտներ երաշխավորման ֆոնդից	10	746,759	1,144,505
Հատուցումների գծով պահուստների ձևավորման ծախսեր	12	(433,205)	(943,181)
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ	7	(313,554)	(210,398)
Վարչական ծախսեր	15	(243,386)	(226,931)
Գործառնական գործունեությունից արդյունք		14,748	30,255
Զուտ ֆինանսական եկամուտ	16	110,482	100,430
Արդյունք մինչև հարկերը		125,230	130,685
Շահութահարկի գծով ծախս	17	(6,283)	(8,505)
Տարվա արդյունք		118,947	122,180
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		118,947	122,180

Եկամտի և ծախսերի հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	374,513	374,513
Տարվա արդյունք	122,180	122,180
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	496,693	496,693
Տարվա արդյունք	118,947	118,947
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	615,640	615,640

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
<i>Գործառնական գործունեությունից մուտքեր</i>		
Ստացված անդամավճարներ	245,070	245,970
Մուտքեր երաշխավորման ֆոնդ	431,695	297,540
Մուտքեր ծառայությունների մատուցումից	14,926	37,453
Մուտքեր հետադարձ պահանջներից	433,205	417,726
Այլ մուտքեր	15,534	-
<i>Գործառնական գործունեությունից ելքեր</i>		
Վճարված հատուցումներ	(509,786)	(917,925)
Փորձագիտական ծախսեր	-	(1,106)
Վճարումներ նյութեր, ապրանքներ ձեռք բերելու համար	(106,055)	(75,657)
Վճարումներ աշխատակիցներին	(138,694)	(133,114)
Վճարումներ բյուջեին	(56,270)	(51,294)
Այլ վճարումներ	(23,286)	(3,358)
<i>Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից</i>	<u>306,339</u>	<u>(183,765)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր ավանդներից	230,654	383,795
Ավանդների տեղաբաշխում	(500,000)	(170,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(15,105)	(2,972)
<i>Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից</i>	<u>(284,451)</u>	<u>210,823</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով վճարումներ	(12,000)	(12,000)
<i>Զուտ հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</i>	<u>(12,000)</u>	<u>(12,000)</u>
Բանկերում մնացորդների զուտ աճ	9,888	15,058
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	220,077	205,019
Բանկերում մնացորդներ տարվա վերջում (Օանոթ. 9)	<u>229,965</u>	<u>220,077</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Բյուրո») ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010թ. հունիսի 28-ի թիվ 1/669Լ որոշմամբ, որպես իրավաբանական անձանց միություն: Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի 2017թ. նոյեմբերի 22-ի թիվ 4-Լ որոշման համաձայն Բյուրոն վերակազմավորվել է հասարակական կազմակերպության: Բյուրոյին անդամակցում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնավառարար) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն իրականացնելու լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները: Բյուրոյին անդամակցությունը կրում է կամավոր բնույթ: 2017թ.-ից Բյուրոյին անդամակցում է նաև ՀՀ կենտրոնական բանկը:

31.12.2022թ-ի դրությամբ Բյուրոյի աշխատակիցների քանակը կազմում է 22 հոգի (2021թ.՝ 21 հոգի):

Բյուրոն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ինքնակարգավորվող կազմակերպություն է, որի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոն նպաստում է ԱՊՊԱ-ի ոլորտում անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը, կարգավորում և վերահսկում է նրանց գործունեությունը, ԱՊՊԱ-ի ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների համար մշակում է մասնագիտական վարքագծի կանոններ:

2017թ. ապրիլի 1-ից ԱՊՊԱ ոլորտում ներդրվել է ուղիղ հատուցումների համակարգը, ինչը նշանակում է, որ ավտովթարների դեպքում տուժող ավտոսեփականատերերն ապահովագրական հատուցում ստանալու համար պետք է դիմեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերություններին: Ապահովագրական ընկերությունները սահմանված կարգով կհատուցեն իրենց հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ավտոմեքենաների սեփականատերերին պատճառված վնասները, որից հետո վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունների հետ կիրականացնեն փոխհաշվարկներ՝ սահմանված չափերով հետ ստանալով իրենց կողմից հատուցված գումարները:

Բյուրոյի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0001, ք. Երևան, Հանրապետության 22, տարածք 2:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՄ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՄ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՄ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ամորտիզացված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Բյուրոյի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բյուրոյի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Բյուրոյի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է որպեսզի Բյուրոյի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Բյուրոն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բյուրոն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բյուրոյի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)
- «Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՄ 3 փոփոխություններ)
- «Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՄ 37 փոփոխություններ):

2.6 Բյուրոյի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բյուրոն վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բյուրոյի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

ՖՀՄՄ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) թողարկել է ՖՀՄՄ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՄ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է ՀՀՄՄ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՄԽ-ն թողարկել է Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները (ՖՀՄՄ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Բյուրոն օգտվել է ՖՀՄՄ 9-ի և ՖՀՄՄ 9 փոփոխությունների կիրառումը մինչև 2023թ. հետաձգելու հնարավորությունից՝ համաձայն ՖՀՄՄ 4 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխության:

Բյուրոն դեռ չի ավարտել ՖՀՄՄ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Բյուրոն կամփոփի իր առաջին տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՄ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները:

ՖՀՄՄ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՄ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՄ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդրադառնա 01 հունվարի 2023թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Բանկերում ավանդները և դեբիտորական պարտքերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն ամորտիզացված արժեքով, իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL)՝ կախված կոնկրետ հանգամանքներից:

2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Բյուրոյի ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2023թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Բյուրոյի համար հանդիսանալու է 2023թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Բյուրոյից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Բյուրոն ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները բարդ են և կպահանջեն դեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- պարտազանցման սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD),
- կորուստ պարտազանցման դեպքում (LGD),
- պարտքի գումար պարտազանցման պահին (EAD):

Բյուրոն այս ցուցանիշները կստանա արտաքին և ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլելու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Բյուրոյի ֆինանսական հաշվետվությունների վրա ամենամասնական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները կկիրառվեն հետադարձ, որպեսզի համապատասխանեն ՖՀՄՍ 17-ի անցումային դրույթներին: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները ճանաչվելու են 2022թ-ի հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում, իսկ 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվելու են:

ՖՀՄՍ 17, Ապահովագրության պայմանագրեր

ՖՀՄՍ 17-ը («Ապահովագրության պայմանագրեր») լույս է տեսել 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ-ի 17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ է տալիս կազմակերպություններին ապահովագրական պայմանագրերի համար կիրառել հաշվապահական հաշվառման առկա փորձը: ՖՀՄՍ-ի 17-ը սկզբունքների վրա հիմնված միակ ստանդարտն է, որը կիրառվում է ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, ներառյալ վերաապահովագրության պայմանագրերի հաշվապահական հաշվառման համար:

Հաշվապահական հաշվառման այս նոր ստանդարտն ընդգրկում է բոլոր տեսակի ապահովագրական պայմանագրերի ճանաչումն ու չափումը, ներկայացումը և բացահայտումը՝ անկախ դրանք թողարկող կազմակերպության տեսակից: ՖՀՄՍ 17-ի ընդհանուր նպատակն է ապահովել ապահովագրական գործունեության հետ կապված եկամուտների և ծախսերի թափանցիկությունը, ժամանակին և թափանցիկ կերպով արտացոլել տնտեսական փոփոխությունների ազդեցությունը և ավելի շատ տեղեկատվություն տրամադրել ապահովագրական գործունեության ընթացիկ և ապագա շահութաբերության մասին:

Համաձայն ՖՀՄՍ 17-ի ապահովագրական պայմանագրերի չափման երեք մոտեցումներն են՝

- Հիմնական մոտեցում,
- Ապահովագրական վճարի բաշխման մոտեցում,
- Փոփոխական վճարների մոտեցում:

Հիմնական մոտեցում

Հիմնական մոտեցման համաձայն՝ ապահովագրական պայմանագրերի խմբերի սկզբնական ճանաչումը և չափումը ներառում է՝

- Պայմանագրերի խմբի կատարման գծով դրամական հոսքերը (FCF), որը իրենից ներկայացնում է ապագա դրամական միջոցների հոսքերի ռիսկով ճշգրտված ներկա արժեքը, որում հաշվի են առնված դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ առկա բոլոր գործող տեղեկությունները, որոնք համահունչ են դիտարկվող շուկայական տեղեկատվությանը, որին ավելացվում է (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանվում է (եթե արժեքը ակտիվ է),
- Պայմանագրերի խմբի չվաստակած շահույթի գումարը (պայմանագրային ծառայության մարժան (CSM)): Ապահովագրողները կարտացոլեն խմբի ապահովագրական պայմանագրերի գծով շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում նրանք տրամադրում են ապահովագրական ծածկույթը: Եթե պայմանագրերի խումբը

հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, կազմակերպությունը պետք է անմիջապես ճանաչի վնասը:

Հիմնական մոտեցման համաձայն՝ ապահովագրական պայմանագրերի հետագա չափումը ներառում է՝

- Պայմանագրերի խմբի կատարման մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն, որն իրենից ներկայացնում է կազմակերպության գումար վճարելու պարտավորությունը և գումար ստանալու իրավունքը՝ կապված տեղի չունեցած ապահովագրական իրադարձությունների և չմատուցված ծառայության հետ,
- Պայմանագրերի խմբի կատարման կրած պահանջների գծով պարտավորություն, որն իրենից ներկայացնում է կազմակերպության պարտականությունը՝ ուսումնասիրել և վճարել՝
 - i. վավեր պահանջներ ապահովագրված դեպքերի համար, որոնք արդեն տեղի են ունեցել,
 - ii. վավեր պահանջներ ապահովագրված դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել, բայց որոնց համար պահանջները չեն ներկայացվել,
 - iii. այլ ապահովագրական ծախսեր, և
 - iv. արդեն իսկ մատուցված ծառայությունների հետ կապված գումարներ:

Մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքում կատարված փոփոխությունների գծով ճանաչվում է՝

- ապահովագրական հատույթ՝ ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունների արդյունքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության նվազման դեպքում,
- ապահովագրական ծառայության ծախսեր՝ անբարենպաստ պայմանագրերի խմբերի գծով վնասների և այդպիսի վնասների հակադարձումների դեպքում,
- ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում:

Կրած պահանջների գծով պարտավորության հաշվեկշռային արժեքում կատարված փոփոխությունների գծով ճանաչվում է՝

- ապահովագրական ծառայության ծախսեր՝ ժամանակաշրջանի ընթացքում կրած պահանջների և ծախսերի հետևանքով պարտավորության աճի դեպքում,
- ապահովագրական ծառայության ծախսեր՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում հետագա ցանկացած փոփոխությունների դեպքում՝ կապված կրած պահանջների և կրած ծախսերի հետ,
- ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում:

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցում

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը կիրառել է միայն այն դեպքում, երբ

- խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակաշրջանը փոքր կամ հավասար է 12 ամսի,
- պարզեցումը կհանգեցնի խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափմանը, որն էականորեն չի տարբերվի հիմնական մոտեցումից:

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցման դեպքում սկզբնական ճանաչման պահին մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը իրենից ներկայացնում է՝

- ապահովագրական վճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,
- հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է այդ վճարումները ճանաչել որպես ծախս,
- գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության՝ այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչումից առաջացող ցանկացած գումար:

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցման դեպքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հետագա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներառում է պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ

- գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրական վճարները,
- հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը,
- գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս,
- գումարած ֆինանսավորման բաղադրիչի գծով ցանկացած ճշգրտում,
- հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հատույթ ճանաչված գումար,
- հանած ցանկացած ներդրումային բաղադրիչ, որը վճարվել կամ փոխանցվել է կրած պահանջների գծով պարտավորությանը:

Փոփոխուն վճարների մոտեցում

Փոփոխական վճարների մոտեցում ուղղակի մասնակցության հայտանիշներով ապահովագրության պայմանագրերի համար նախատեսված մոտեցում է և հիմնականում ներառում է կյանքի ապահովագրության պայմանագրեր: Բյուրոն չի նախատեսում կիրառել այս մոտեցումը:

Այսպիսով, ՖՀՄՍ 17-ը ներկայացնում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների չափման տարբեր մոտեցումներ: Ակնկալվում է, որ ընկերության կողմից կնքված ապահովագրական պայմանագրերի մոտավորապես 90%-ի համար 2023 թվականին կկիրառվի ապահովագրական վճարների բաշխման մոտեցումը, քանի որ դրանք կարճաժամկետ ապահովագրության պայմանագրեր են:

Անցումային դրույթներ

Բյուրոն ակնկալում է, որ ՖՀՄՍ 17-ի կիրառումը լիովին հետընթաց հիմունքներով անիրագործելի կլինի, քանի որ ապահովագրության պայմանագրերի ոչ բոլոր պատմական տվյալներն են արժանահավատորեն հասանելի: Հետևաբար, Բյուրոն ակնկալում է, որ կկիրառի անցման փոփոխված հետադարձ մոտեցումը, ինչպես նկարագրված է ՖՀՄՍ 17-ում:

Բյուրոն դեռևս գտնվում է ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացում: Քանի որ ստանդարտի կիրառման պրակտիկան, SS լուծումները և մեկնաբանությունները դեռևս մշակման փուլում են, դրա ներդրման հավանական ազդեցությունը մնում է անորոշ: Ղեկավարությունն ակնկալում է թարմացումներ տրամադրել ՖՀՄՍ 17-ի հնարավոր ազդեցության վերաբերյալ 2023 թվականի

միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում: Բյուրոն կամփոփի վերջնական ազդեցությունը իր առաջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այլ ՖՀՄՄ փոփոխություններ

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բյուրոյի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ),
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՄ 8 փոփոխություններ),
- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՄ 16 փոփոխություններ),
- Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1 փոփոխություններ) Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Բյուրոյի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	393.57	480.14
ՀՀ դրամ/1 Եվրո	420.06	542.61

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից եկամտի կամ ծախսի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար Բյուրոն կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: 2022 և 2021թթ. ընթացքում Բյուրոն չի ունեցել արտարժույթային գործարքներ:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է եկամտում կամ ծախսում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են եկամտում կամ ծախսում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է եկամտում կամ ծախսում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգիչներ և կապի միջոցներ	8 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Բյուրոյի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է եկամտում կամ ծախսում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բյուրոն դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բյուրոն գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բյուրոյին,
- Բյուրոն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,

- Բյուրոն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բյուրոն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բյուրոն որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բյուրոն պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բյուրոյի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բյուրոն հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բյուրոն նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բյուրոն չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բյուրոյի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը նվազեցվում է կատարված վճարումների և մեծացվում տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ եկամտում կամ ծախսում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Բյուրոն կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են եկամտում կամ ծախսում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բյուրոն սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները ներկայացվել են առանձին տողով:

Բյուրոն որպես վարձատու

Որպես վարձատու՝ Բյուրոն դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական:

Գործառնական վարձակալությանը ենթակա ակտիվները Բյուրոյի կողմից ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են դրանց բնույթի համապատասխան:

Բյուրոն իր կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնելու նպատակով գործընկերներին տրամադրել է անհատույց օգտագործման հիմնական միջոցներ՝ դրանցից եկամուտ չակնկալելով (տես ծանոթագրություն 4):

3.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Բյուրոն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,

- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են տարվա արդյունքում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Բյուրոյի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19.2-ում:

Ընդհանուր առմամբ, Բյուրոյի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են տարվա արդյունքում և ներկայացվում են «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

Երաշխավորման ֆոնդի և անդամավճարների գծով ստացվելիք գումարները ճանաչվում են այն ժամանակ, երբ անդամ ապահովագրական ընկերություններից ստացվում են պարբերական վճարների հաշվարկման հիմք հանդիսացող հաշվետվությունները:

Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարները, որոնք բացի Բյուրոյի կողմից նախկինում վճարված հատուցումների գծով պահանջներից, ներառում են նաև տվյալ հատուցումների կարգավորման համար իրականացված դատական և փորձագիտական ծախսերի դիմաց ստացվելիք փոխհատուցումները, ճանաչվում են այն ժամանակ, երբ օրենսդրության համաձայն Բյուրոն ստանում է հետադարձ պահանջի իրավունք վճարված հատուցման գծով: Դեբիտորական պարտքի ճանաչման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- Երբ վնաս պատճառած անձը հայտնի է.
- Երբ վնաս պատճառած անձն անհայտ է, սակայն հայտնի է տրանսպորտայի միջոցի սեփականատերը:

Մնացորդներ բանկերում

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները ՀՀ կենտրոնական և առևտրային բանկերում:

ii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Բյուրոյի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է ավանդների արժեզրկման օբյեկտիվ ապացույց,

Ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է եկամտում կամ ծախսում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունները ներառում են՝

- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը
- Պահուստները հատուցումների գծով (տես ծանոթագրություն 3.10)

i. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Կուտակվող վճարովի բացակայությունների գծով պարտավորության հաշվառման սկզբունքները տես ծանոթագրություն 3.12-ում:

3.7 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույն գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս տարվա արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ տարվա արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև

տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով տարվա արդյունքում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինի:

Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Բյուրոն սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Բյուրոն սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում: Այդ խմբերի նկատմամբ կիրառվում են կորուստի գնահատված ցուցանիշներ, հիմնված նախորդ տարիների պատմական կորուստների վրա:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի տարվա արդյունքում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Գործընկերոջ հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

3.8 Զուտ ակտիվներ

Բյուրոյի զուտ ակտիվները կազմված են միայն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված արդյունքից:

3.9 Երաշխավորման ֆոնդ

Երաշխավորման ֆոնդը ձևավորվում է Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից կատարված միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ վճարներից:

Երաշխավորման ֆոնդի միջոցները եկամուտ են ճանաչվում այն ժամանակաշրջանում, երբ կատարվում են հատուցումների ուղղությամբ ծախսեր կամ ձևավորվում են հատուցումների համար նախատեսված պահուստներ:

3.10 Պահուստներ հատուցումների գծով

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բյուրոն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե

հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Չկարգավորված պահանջների պահուստ

Բյուրոն ստեղծում է չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ներկայացված հետադարձ պահանջները և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Նման պահանջների համար Բյուրոն ձեռավորում է Տեղի ունեցած, բայց չներկայացված պահանջների պահուստ (ՏՉՊ):

Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ օրենքով սահմանված պարտավորությունները կատարվում են կամ երբ դադարում են:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Բյուրոն կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Բյուրոն հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների հաշվառման հիմքեր Բյուրոն չի ունեցել:

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի Բյուրոն ազատվում է շահութահարկի վճարումից Երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են Երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Բյուրոյին մատուցում են ծառայություններ, Բյուրոն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Բյուրոն պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Բյուրոն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Բյուրոն վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.13 Հասույթի ճանաչում

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Բյուրոն առաջնորդվում է 5-բայլի գործընթացով.

- 1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Բյուրոն բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Բյուրոն ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Բյուրոն բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Բյուրոն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երաշխավորման ֆոնդ

Երաշխավորման ֆոնդի միջոցները եկամուտ են ճանաչվում այն ժամանակաշրջանում, երբ կատարվում են հատուցումների գծով ծախսեր կամ ձևավորվում են հատուցումների համար նախատեսված պահուստներ, ձևավորում են ակտիվների արժեզրկման ծախսեր:

Անդամավճարներից եկամուտ

Անդամավճարներից եկամուտները ճանաչվում են գծային մեթոդով՝ այն ժամանակաշրջանի ընթացքում, որոնց վերաբերում են անդամավճարները:

Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Բյուրո վճարում են միանվագ և պարբերական անդամավճարներ: Միանվագ անդամավճարը Բյուրո վճարվում է Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Պարբերական անդամավճարները վճարվում են ամսական կտրվածքով՝ տվյալ ամսվա վերջին օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում, պարբերական անդամավճարը լրիվ չափով կատարվում է նաև այն ամսվա համար, որի ընթացքում ապահովագրական ընկերությունը դարձել է Բյուրոյի անդամ:

Միանվագ և պարբերական անդամավճարների չափերը սահմանվում են Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի կողմից:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգ- չային տեխնիկա	Գրասենյակային և տնտեսական գույք	Տրանս- պորտային միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	52,866	19,270	10,600	25,640	108,376
Ավելացում	2,972	-	-	-	2,972
Օտարում	(2,259)	(586)	-	-	(2,845)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,579	18,684	10,600	25,640	108,503
Ավելացում	515	90	14,500	-	15,105
Օտարում	(1,828)	(682)	(10,600)	-	(13,110)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,266	18,092	14,500	25,640	110,498
<i>Կուտակված մաշվածություն և ամորտիզացիա</i>					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	50,133	15,693	10,600	14,278	90,704
Տարվա հաշվարկ	2,383	1,053	-	2,577	6,013
Օտարում	(2,249)	(464)	-	-	(2,713)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,267	16,282	10,600	16,855	94,004
Տարվա հաշվարկ	1,354	992	1,802	2,403	6,551
Օտարում	(1,828)	(612)	(10,600)	-	(13,040)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,793	16,662	1,802	19,258	87,515
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,312	2,402	-	8,785	14,499
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,473	1,430	12,698	6,382	22,983

Հաշվետու ամսաթվի դրությամբ Բյուրոն գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բյուրոյի որոշ հիմնական միջոցները հանձնված են գործառնական վարձակալության (2021թ.՝ նույնպես): Նշված վարձակալության պայմանագիրը իրենից ներկայացնում է հիմնական միջոցների անհատույց օգտագործման պայմանագիր:

Զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները, որոնք դեռևս հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ունեն 60,946 հազար դրամ սկզբնական արժեք (2021թ. 71,904 հազար դրամ):

5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի առկա գործառնական վարձակալությունների համար Բյուրոն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բյուրոն նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բյուրոն, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Բյուրոն պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը.

Հազար դրամ

	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ
<i>Սկզբնական արժեք</i>	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,718
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,718
<i>Գուտակված մաշվածություն</i>	
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	37,699
Տարվա հաշվարկ	10,179
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	47,878
Տարվա հաշվարկ	10,179
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,057
<i>Հաշվեկշռային արժեք</i>	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,840
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,661

Վարձակալության գծով պարտավորություններ

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	29,370	37,800
Տոկոսի կուտակում	2,626	3,570
Վճարումներ	(12,000)	(12,000)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,996	29,370

2022թ. և 2021թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում 11.2%:

6 Պաշարներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Վառելիք	-	80
Այլ	410	216
	410	296

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Երաշխավորման ֆոնդի գծով ստացվելիք գումարներ	132,459	114,609
Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարներ	397,301	1,022,321
Այլ դեբիտորական պարտքեր	16,927	17,379
<i>Ֆինանսական ակտիվներ մինչև արժեզրկում</i>	546,687	1,154,309
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	(174,589)	(722,044)
<i>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</i>	372,098	432,265
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	298	298
Տրված կանխավճարներ	20,602	14,738
<i>Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ</i>	20,900	15,036
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	392,998	447,301

Անդամավճարների գծով ստացվելիք գումարները վերաբերում են հաշվետու տարվա վերջին ամսվա համար ստացվելիք պարբերական անդամավճարներին, որոնք անդամների կողմից ենթակա են վճարման տվյալ ամսվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Երաշխավորման ֆոնդի գծով ստացվելիք գումարները վերաբերում են հաշվետու տարվա վերջին ամսվա համար ստացվելիք պարբերական անդամավճարներին, որոնք անդամների կողմից ենթակա են վճարման տվյալ ամսվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարները վերաբերում են Բյուրոյի կողմից արդեն վճարած հատուցումների և դրանց հետ կապված դատական ու փորձագիտական ծախսերի գծով վնասը պատճառած անձի (կամ տուժողի մեղքի առկայության դեպքում՝ տուժողի) նկատմամբ պահանջներին:

2022թ. համեմատական նվազումը պայմանավորված է ՀՀ-ում պարեկային ծառայությունների կատարման ընթացքում տուգանքների կիրառման հետևանքով, քաղաքացիների կողմից ավտոմեքենաների պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագրերի պարտադիր կնքման պահանջը ավելի պատասխանատու կատարելու հետ:

2021թ. գումարի մեծությունը պայմանավորված էր 2020թ.-ին COVID-19-ի համավարակային իրավիճակի և Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով քաղաքացիների կողմից ավտոմեքենաների պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագրերի պարտադիր կնքման պահանջը չկատարելու հետ: Արդյունքում աճել են Բյուրոյի կողմից տրամադրվող հատուցումների ծավալը, որոնք նաև ենթակա են հետադարձ պահանջի: Հատկանշական է նաև, որ 2020թ.-ին թերի է աշխատել դատական համակարգը, ինչի հետևանքով 2020թ.-ի դատական հայցերի մի մասի բեռն նույնպես ընկել է 2021թ.-ին:

Այլ դեբիտորական պարտքերը ներառում են մատուցված ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տրված կանխավճարները ներառում են ծառայությունների գծով կանխավճարները:

Վերոնշյալ գումարների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացված է 3.6 ծանոթագրությունում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 24,806 հազար դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեք ունեցող առանձին առևտրային դեբիտորական պարտքեր անհատապես արժեզրկվել են, և դրանց գծով ստեղծվել է պահուստ: Անհատապես արժեզրկված հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարների գծով պահուստի գումարը կազմում է 24,806 հազար դրամ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ անհատական պահուստ չի ստեղծվել: Խմբային հիմունքով ստեղծված պահուստի գումարը կազմում է 174,589 հազար դրամ (2021թ. 697,238 հազար դրամ):

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	722,044	298,376
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին գուտ հատկացումներ	313,554	210,398
Զուտ (դուրսգրումներ)/ վերականգնումներ	(861,009)	213,270
Տարեվերջի մնացորդ	174,589	722,044

2022թ. ընթացքում հնարավոր կորուստների պահուստին զուտ հատկացումների ներառում են հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարների գծով ծախսեր 313,554 հազար դրամ (2021թ. 201,324 հազար դրամ): (Ծանոթ. 10)

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հետևաբար, ղեկավարությունը հավատացած է, որ ստեղծված դեբիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

8 Արդյունքներ բանկային ավանդներում

Ավանդները ներդրված են 90 օր և ավելի ժամկետով, և պարբերաբար երկարաձգվում են, սակայն հիմնականում չեն գերազանցում 12 ամիսը:

Ավանդների միջին տոկոսադրույքը կազմում է 9.9% (2021թ.՝ 9.4%):

9 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում	26	49,826
Հաշիվներ ՀՀ առևտրային բանկերում	229,939	170,251
	<u>229,965</u>	<u>220,077</u>

10 Երաշխավորման ֆոնդ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Մնացորդը տարվա սկզբում		-
Մուտքեր երաշխավորման ֆոնդի հաշվին	504,138	436,910
Մուտքեր հետադարձ պահանջներից	549,271	707,595
Երաշխավորման ֆոնդի օգտագործում, այդ թվում՝		
<i>Հատկացումներ հետադարձ պահանջների գծով պահուստին (տես՝ ծանոթ. 7)</i>	<i>(313,554)</i>	<i>(201,324)</i>
<i>Հատկացումներ հատուցումների գծով պահուստներին (տես՝ ծանոթ. 12)</i>	<i>(433,205)</i>	<i>(943,181)</i>
Մնացորդը տարվա վերջում	<u>306,650</u>	<u>-</u>

Երաշխավորման ֆոնդում միավորվում են Բյուրոյի՝ հավաքագրած Բյուրոյի անդամների կողմից կատարված միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարները, օրենքով սահմանված կամ օրենքով չարգելված այլ ձևերով ներդրված միջոցները:

Բյուրոյի կողմից ներկայացված, բայց չվճարված պահանջների և տեղի ունեցած, սակայն չվճարված հատուցումների գծով ծախսերով ձևավորվող պահուստի ձևավորմանը, ինչպես նաև հետադարձ պահանջների գծով պահուստին հատկացումներին զուգընթաց, երաշխավորման ֆոնդից կատարվում է եկամտի ճանաչում:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների հանդեպ	13,955	18,289
Առևտրային կրեդիտորական պարտքեր	81,943	90,433
<i>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</i>	95,898	108,722
Ստացված կանխավճարներ	3,376	75,901
Կրեդիտորական պարտքեր բյուջեին (բացառությամբ շահութահարկի)	8,409	6,804
<i>Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ</i>	11,785	82,705
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	107,683	191,427

Բյուրոյի առևտրային և կրեդիտորական պարտքերը կարճաժամկետ են, դրանց գծով մարումների ժամանակացույցը չի գերազանցում մեկ տարին: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում:

12 Պահուստներ հատուցումների գծով

Հատուցումների գծով պահուստի շարժը հետևյալն է.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբում	200,977	142,238
Պահուստի գծով ծախս երաշխավորման ֆոնդից	433,205	943,181
Օգտագործում	(509,786)	(884,442)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	124,396	200,977

Պահուստներ հատուցումների գծով տողն իրենից ներկայացնում է Բյուրոյին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված հայտերի պահուստը, ինչպես նաև տեղի ունեցած, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստը:

13 Եկամուտներ հիմնական գործունեությունից

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Եկամուտներ անդամավճարներից	245,070	247,698
Փորձաքննությունների գծով եկամուտներ	19,898	40,421
Այլ եկամուտներ	28,435	24,713
	<u>293,403</u>	<u>312,832</u>

14 Ծախսեր պայմանավորված հիմնական գործունեությամբ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Փորձաքննությունների իրականացման ծախսեր	15,108	26,277
Այլ ծախսեր	487	647
Փաստաբանական ծառայությունների համար կատարվող ծախսեր	22,624	19,743
	<u>38,219</u>	<u>46,667</u>

Փաստաբանական ծախսերը վերաբերում են հետադարձ պահանջների հավաքագրման գծով ստացված իրավաբանական ծառայություններին:

15 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Անձնակազմի գծով ծախսեր	182,170	177,278
Մաշվածություն և ամորտիզացիա	16,730	16,192
Գովազդային ծախսեր	26	-
Ներկայացուցչական ծախսեր	3,425	3,397
Տրանսպորտային ծախսեր	1,406	1,697
Համակարգչային ծրագրերի սպասարկման ծախսեր	6,707	6,948
Հեռահաղորդակցության ծախսեր	3,491	3,981
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,949	3,051
Դատական ծախսեր	20,983	8,353
Այլ ծախսեր	5,499	6,034
	<u>243,386</u>	<u>226,931</u>

16 Ֆինանսական եկամուտ և ծախս

Հազար դրամ	2022թ.	2021թ.
<i>Ֆինանսական եկամուտներ</i>		
Տոկոսային եկամուտ երաշխիքային ֆոնդի գումարների ներդրումից	24,325	10,969
Տոկոսային եկամուտ երաշխիքային ֆոնդի տույժերից	3,025	558
Տոկոսային եկամուտ հետադարձ պահանջների գծով	79,458	90,839
Տոկոսային եկամուտ անդամավճարների ներդրումից	6,300	1,634
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	113,108	104,000
<i>Ֆինանսական ծախսեր</i>		
Տոկոսային ծախս վարձակալության գծով	(2,626)	(3,570)
Ընդամենը ֆինանսական ծախս	(2,626)	(3,570)
Զուտ ֆինանսական եկամուտ	110,482	100,430

17 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հարկ	6,283	8,505
	6,283	8,505

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)	31 դեկտեմբերի 2021թ.	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	125,230		130,685	
Շահութահարկ	22,541	18	23,523	18
Չհարկվող եկամուտ	(16,258)	(13)	(15,018)	(11)
Շահութահարկի գծով ծախս	6,283	5	8,505	7

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.՝ 18%): Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի Բյուրոն ազատվում է շահութահարկի վճարումից Երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են Երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Բյուրոն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պահուստներ հատուցումների գծով

Հատուցումների գծով Բյուրոն ձևավորում է պահուստ հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների համար: Բյուրոն գնահատում է ներկայացված պահանջները "դեպք-առ-դեպք" մեթոդով:

Ապահովագրական պատահարի գծով վնասի չափը որոշվում է փորձագետների կողմից և տվյալ գնահատականը հիմք է հանդիսանում պահուստի չափը որոշելու համար: Վնասի չափի որոշման անհնարինության դեպքում պահուստը ձևավորվում է օրենքով սահմանված առավելագույն վճարվելիք հատուցման չափով:

Բյուրոն ձևավորում է նաև պահուստ այն պատահարների համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՉՊՊ): ՏՉՊՊ հաշվարկն արտացոլում է վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բյուրոն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բյուրոն կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ անձանց հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների սնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդները

մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
<i>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	372,098	432,265
Մնացորդներ բանկերում	229,965	220,077
<i>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ</i>		
Ներդրումներ բանկային ավանդներում	513,059	213,385
	<u>1,115,122</u>	<u>865,727</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Վարձակալության գծով պարտավորություններ	19,996	29,370
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	95,898	108,722
Պահուստներ հատուցումների գծով	124,396	200,977
	<u>240,290</u>	<u>339,069</u>

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Բյուրոն ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Բյուրոն ներգրավված չի սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Բյուրոն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Բյուրոն ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Բյուրոն գործարքները հիմնականում իրականացնում է հայկական դրամով: 2022թ. և 2021թ. ընթացքում Բյուրոն չի ունեցել արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, հետևաբար այն չի ենթարկվում արտարժույթային ռիսկի:

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բյուրոյի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բյուրոն չի ունեցել տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Բյուրոն կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Նման կորուստներից խուսափելու համար Բյուրոն ընդունել է քաղաքականություն, որի համաձայն համագործակցում է միայն վճարունակ անձանց հետ:

Բյուրոյի առևտրային դեբիտորական պարտքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ապահովագրական ընկերություններին, ինչպես նաև մեղավոր անձանց հանդեպ հետադարձ պահանջների գծով ստացվելիք գումարներին: Պարտքերը գոյանում են անդամավճարների, պարբերական և լրացուցիչ վճարների, ինչպես նաև միանվագ վճարների արդյունքում: Նշված դեբիտորական պարտքերը իրենց մեջ գրեթե չեն ներառում պարտքային ռիսկ, քանի որ նշված ապահովագրական ընկերությունների կողմից այդ գումարների վճարումով է պայմանավորված նրանց հետագա գործունեությունը ԱՊՊԱ համակարգում:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

<i>Հազար դրամ</i>	<i>31 դեկտեմբերի 2022թ.</i>	<i>31 դեկտեմբերի 2021թ.</i>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	372,098	432,265
Ներդրումներ բանկային ավանդներում	513,059	213,385
Մնացորդներ բանկերում	229,965	220,077
	1,115,122	865,727

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բյուրոյի ժամկետանց դեբիտորական պարտքերը կազմել են՝ 333,867 հազար դրամ (2021թ. 905,844 հազար դրամ): (տես ծանոթ. 7)

Ղեկավարության գնահատմամբ բանկերում տեղաբաշխված միջոցների՝ ներառյալ ավանդների հետ կապված պարտքային ռիսկ առկա չէ, քանի որ դրանք գտնվում են հեղինակավոր առևտրային բանկերում:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Բյուրոն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Բյուրոն վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Բյուրոն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Բյուրոյի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի ստացման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 7-ում:

21 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

22 Պարտավորվածություններ

22.1 Իրավական պարտավորվածություններ

Բյուրոյին ներկայացվող դատական հայցերի առումով Բյուրոյի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով կարող է կրել կորուստներ, ուստի դրանց գծով ստեղծել է պահուստներ:

23 Պայմանականություններ

23.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում, և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, Ռուսաստանի ազգային վերաապահովագրական ընկերության, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Ուկրաինիան և Ռուսաստանը հանդիսանում են Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներ, և Հայաստանի գործարար միջավայրը անմասն չի մնացել այս ազդեցությունից:

Քանի որ ռազմական գործողությունները դեռ չեն դադարել, անհնար է արժանահավատորեն գնահատել դրա վերջնական ազդեցությունը Հայաստանի գործարար միջավայրի վրա:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բյուրոյի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Բյուրոյի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բյուրոյի գործունեության վրա կարող են տարբերվել Բյուրոյի ղեկավարության ներկա սպասումներից:

23.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Բյուրոն չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Բյուրոյի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով

երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Բյուրոն համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Բյուրոյի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24 Կապակցված կողմեր

Բյուրոյի կապակցված կողմերը ներառում են ՀՀ կենտրոնական բանկը, որը հանդիսանում է Բյուրոյի միակ հիմնադիրը և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

24.1 Վերահսկողություն

Բյուրոյին վերահսկող մարմինն է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը, որը հանդիսանում է Բյուրոյի միակ հիմնադիրը:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Բյուրոյի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Գործարքներ		
<i>Մնացորդներ բանկերում</i>		
Հաշիվներ ՀՀ ԿԲ-ում		
Մնացորդը տարվա սկզբին	49,826	431
Տարվա ընթացքում ավելացում	245,070	49,395
Տարվա ընթացքում նվազում	(294,870)	-
Մնացորդը տարվա վերջին	26	49,826
<i>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</i>		
Մնացորդը տարվա սկզբին	-	-
Տարվա ընթացքում ավելացում	-	240,353
Տարվա ընթացքում նվազում	-	(240,353)
Մնացորդը տարվա վերջին	-	-
<i>Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր</i>		
Մնացորդը տարվա սկզբին	1,204	43,832
Տարվա ընթացքում ավելացում	360	5,455
Տարվա ընթացքում նվազում	(160)	(48,083)
Մնացորդը տարվա վերջին	1,404	1,204

24.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է անձնակազմի գծով ծախսեր հոդվածում.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ, հարկերը	76,921	69,313
	76,921	69,313